

ամեն»: Յայտ է թէ պակասի բառն հանգեալ, այսինքն մեռաւ. բայց ըստ այլ յիշատակաց երկեմաւ եւս յետոյ ցուցաք (յէջ 147) զվախճան Յովհաննու:

154-5. Գրիգոր գրիչ յԱկներ.– Չատ ՚ի գրոցն յիշատակելոց ՚ի կարգին, ընդօրինակեալ է սորա յամի 1325 եւ զՄեկնութիւն Թղթոց Պօղոսի որ առ Տիմոթէոս եւ Տիտոս. յորում՝ ընդ այլոց միաբանից եւ մերձաւորաց յիշէ եւ զհոգեւոր հայր իւր Կոստանդին՝ զաւակօք իւրովք, զքեռորդի իւր Կոստանդին քահանայ գորդի Սիմէոն երիցու, եւ գորդի քեռորդւոյն զՊետրոս, եւ զկուսակրօն քահանայսն Գրիգոր եւ Սերովբ, «որք յղորդելն (զգիրսն) աշխատեցան». զԲարսեղ քահանայ «որ զգիրքս կազմեաց» եւ զԿարապետ՝ որ ծաղկեաց:

155 Բ. Մինաս միաբան Ակներոյ վանաց՝ յիշեալն ընդ այլոց, ընդօրինակեալ է անդ յամի 1322, զիրս ինչ հոգեւորականս, «ի բազմավրդով ժամանակիս», յորում յաւար մատնեցաւ «պանծալի քաղաքն ծովահայեացն Եգէայն որ է Այաս.» եւ յայն սակս ողբալով ասէ, «խորտակեալ է հոգւոյ ոսկերքս»:

156. – Ժամանակագիրն Կիլիկիոյ, ՚ի կէս ԺԷ դարու «այժմ յաւուրս մեր, ասէ, ըստ անուան վանիցն՝ տեղին Ակներ կոչի, եւ վանիցն յաւերակին՝ աղօրէն, այսինքն ջաղացք. զի ոչ ոք կայ ՚ի նմա ՚ի վաղուց հետէ»:

156. Բ. Թիրքթի վանք.– Ի նմին յայնմ ամի, 1335, յորում ասացաք յիշեալ զտեղիս զայս, Մանուէլ ոմն գրէ Շարական՝ անդ «ի մեծ եւ ՚ի հռչակաւոր Անապատս՝ որ կոչի Թիրքթի. (եւ մաղթէ՝ զի) երգ օրհնութեան եւ ձայն սաղմոսաց. եւ լուցումն լապտերաց եւ բուրումն անուշահոտ խնկոցն՝ մի՛ պակասեսցի ՚ի սմանէ՝ մինչեւ ՚ի կատարած աշխարհի: Ի խնդրոյ պատուական եւ երջանիկ առաջնորդի սուրբ ուխտիս՝ Տէր Գրիգորու, զոր Տէր Աստուած պահեսցէ ըստ կամաց իւրոց»: Յետոյ կրկին յիշէ «զերիցս երանեալ եւ զծաղկեալ ալեօք զհայրապետն՝ զՏէր Գրիգոր». եւ զխոշորութիւն իւրոյ գրչութեանն՝ հայցէ ուղղել «եղբայրաբար. զի ժամանակս ձմեռնային էր, եւ հիւսիսայինն սաստիկ, եւ